

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պաշտօնաւոր
Տարեկ 10 ֆր
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամսական
2 Տոյ 30 անոյ

ԿԱՆԽԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՎԱՆԴԵՍ . ԱԶԳՅՍԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏՍԿՍՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ.

Ե. ՏԱՐԻ

ՕԳՈՍ. 25 ՇԱՐԱԹ 1901

ԹԻԻ 221

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՔ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԵՏ

(ՄԻՒՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւլտիւրիւնի ֆորտար վէ Հիբիսկէր. Մալիւմա-
թը ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆէննի Էյլէնճէրէր
վէ Բէսիմլի Պիլլէճէրէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ
նէշը օլուլան մէզբիւր քիթապըն պիլլինճի ճիլ-
տի խիթամ պուլուպ, իտարէխանէմիլտէ սա-
թըլմագտատըր: Յիլ 2 ֆրանք:

ԱԶԳԱՅԻՆ

Տեղւոյն քահանաներէն Տ. Սարգիս հայր Ղա-
րիպեան՝ Ս. Պատրիարք հօր յանձնարարականով
և Թալ. խորհրդոյ կողմէ տրուած ժապաւինեալ
տուժարով ծրեքշաբթի օրը Ռումանիա և Հուն-
գարիա ուղևորեցաւ, այնտեղացի ազգայիններէն
ալ հանգանակութիւն ընելու համար ի նպատակ
Առաջնորդարանի (վարժարան) շիւթնենէն մը-
նացած պարտոյ վճարման:

—Տեղացի ազգային մը՝ խմբագրութեանս
ուղեալ նոմակաւ մը իրաւամբ կը հարցնէ թէ,
Ազգ. գերեզմանատան մէջ պահապանի յատուկ
խրճիթի մը շինութեան ի նպատակ տեղացի տիկ-
նոջ մը ձեռամբ եղած հանգանակութիւնը ո՞ր
մնաց:

—Վսեմ. Մաթուս և Աբիկ էֆէնտիք Ուն-

ճեան՝ Սկիտար Ս կարապետ եկեղեցիին ու անոր
մօտակայ աղբիւրներուն աւրուած ջրուղիները
սկսած են շինել տալ. բոլոր ծախքերը իրենք վը-
ճարելով:

—Շտաթուս շնորհակալութեամբ ստացանք
երկու գրական գործերն էր Առաջինն է Միթիւն
անունով պատկերազարդ օքանչելի գիրքը որ ան-
մահ Միթիւն իրաւ հօր յորեկանին առթիւ հը-
րատարակուած է: Կը պարունակէ Միթիւնայ և
անոր Միաբանութեան անդամ Վեր. Հարց պատ-
կերազարդ կենսագրականները և անոնց գոր-
ծունէութիւնները: Երկրորդն է «Քննական Պատ-
մութիւն ժոյ դարու հայ դպրութեան» որ Բա-
նասերի խմբագրութեան կողմէ հրատարակուած
ու Միթիւնեան յորեկանին նուիրուած է. սոյն
գիրքը հայ դպրութեան երկհարկաւորեալ գը-
րական արդիւնքը կը պատկերացնէ: Այս երկու
գիրքերը կը ծախուին հինգական ֆրանքի: Գի-
մել ի վենետիկ Ս. Ղազար Բաղմալիյի խմբագ-
րութեան, և ի Բարիզ Բանասերի խմբագրութեան:

ԵԳԻՊՏՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Խմբագիր,

Ներկայիս կուգամ տեղւոյն ազգային գոր-
ծոց և կանքին վրայ գրել ու Հայեցի ազնիւ ըն-
թերցողները ինչ պէս տխրեցնել, եթէ երբէք
ազգային ղգացում կը կրենք:

Ազգ. քսանդրիա ունի փոռաւոր եկեղեցի մը
Ս. Պողոս անունով, որուն դրսի մէկ կողմը մար-
մարիոնէ ճերմակներ հագած նստած է եգիպտո-

սի բարերար հուշակաւորն նուպար բաշա : Տապա-
նաքարը մինակ Թրանսերէն վրուած է . Հայերէն
բառ մը անգամ չի կայ . . . :

Եկեղեցին ահագին կայուածներ ունի որոնց
հասցեթուղ կը կառավարուին իր երկսեռ դպրոց-
ները : Հոս կայ մէկ եպիսկոպոս , երեք վարդա-
պետ և երկու քահանայ , ամենքն ալ անտարբեր
դէպի ազգն : Ամենքն ալ իրենց արբանեակները
ունին եկեղեցւոյ շրջափակին մէջ եղած առաջ-
նորդարանի յարկին տակ : Կեր , արք և ուրախ
լեր . . . Գիշերները պտոյտէ կը վերադառնան
ժամը 12ին , այնպէս որ արապ դռնապանը ա-
սոնց այդ ժամանակի դալէն ձանձրանալով մին-
չև իսկ դուռը բանալու կը դժկամակի : Ոչ հար-
ցնող կայ ոչ բնառող : Առաջնորդն ալ շնորհքով
մարդիկ կը բնառէ կարեւոր գործերը մտիկը
ներու համար : Մօտ օրերս խնդրոյ մը համար պարզ
ժողովուրդի զաւկի մը առաջնորդին ներկայանա-
լը յարմար դատուեցաւ . նոյն անձը 200է աւե-
լի ազգայնոց ստորագրութիւնը կրող հանրագ-
րութիւն մը տարաւ յանձնել Գեր . Յ . Այվազեա-
նի : Սրբազան առաջնորդը փոխանակ հանրագ-
րութիւնը կարդալու , մէկէն ի մէկ կըսէ . « Ին-
չուն շնորհքով մարդիկ չի բերին » : (? ? ?) Սրբա-
զանը ժողովրդի զաւակ այդ հայուն խեղճուկ վի-
ճակին վրայ աչքը տնկած՝ առարկութիւններ յա-
րուցանել կ'ուզէ , սպասելով սիոնիստ գլխարկ և
փայլուն հագուստ կրող վսեմաշուքներու . . . Հան-
րագրութիւնը ներկայացնող հայը իսկոյն թուղ-
թը Սրբազանին ձեռքէն առնելով մեկնիր կը
շտապէ սպասեցնելով նորին Գերապատուութիւնը
թէ շնորհքով մարդիկ պիտի բերեն վերջը . . . :

Հոս երկու կուսակցութիւններ կան . մին ժու-
ղովրդային՝ որ կը պահանջէ Սահմանագրութիւ-
նը դործադրել , երկրորդը՝ փաշաներու և պէյե-
րու կուսակցութիւնն է որոնք ազգին գործերը
միահեծան կը կառավարեն , կարգ մը բաղդա-
խնդիրներու խայտառակ քծնումներէն խաբուե-
լով , ու ասանկով , աւաղ , ազգը տուժած է շատ
բան : Այս կարգէն է նաև հետեւեալ սրտամորմոք
եղելութիւնը .

Հոս Երուսաղէմապատկան հողեր ու շէնքեր
քսանը չորս հազար ոսկիի կը ծախուի , առանց
ազգին իմացնելու , այս գործին գլխաւոր գերա-
կատարները կըլլան Վահրամ վարդապետ և Լեոն
Մկրտիչեան :

Այս ծախուած հողերը Անդրիացի ձօրճ Ալ-
տըրսըն անունով մէկը կը գնէ . առնելուն հե-
տեւեալ օրը 80,000 ութսուն հազար ոսկիի դին կը
դնէ , քանի մը տեղերէն փողոց կը բանայ և այդ

պատկառելի գումարէն վար չուզեր ծախել հի-
մա :

Արդեօք այդչափ կարօտ էր Երուսաղէմ , որ
ժամանակ չունեցան խորհելու և չուրջերին նա-
յելու . չկային մեր մէջ մէկ քանի հայ հարուստ-
ներ որ նոյն 24 հազար ոսկին ընկերակցութեամբ
տային Երուսաղէմին աւ իրենք անդլիացիին պէս
մաս առ մաս ծախելով՝ աւելորդը Որբախնամ
գործին յատկացնէին :

Այս առթիւ Աղեքսանդրիոյ հայ ժողովուր-
դի մեծամասնութեան զգացած կսկիծը խիստ մեծ
է և անդարմանելի :

7/20 օգոստ 1901

ՍԼԱՔ

ՎԵՂ. ՀԱՅՐԱՊԵՐԸ ԵՒ ՄԻԹԱՐԵԱՆՔ

Սեւանայ անապատին մէջ 600 տարուան հը-
նութիւն ունեցող Տիրամօր հրաշագործ պատկե-
րը կայ , որուն առջև ժամանակին՝ Սեփաստացի
Մխիթար վարդապետ ուղօթած է և յիշեալ Տի-
րամօր պատկերին զօրութեամբ՝ իրեն վերահաս
կուրութենէն բժշկուած է : Վենետիկոյ Մխիթար-
եան Միաբանութիւնը՝ իր հաստատութեան 200
ամեայ յօրեղեանին առթիւ , Ս . Հայրապետէն
յատկապէս նոյն հրաշագործ պատկերը առժամ-
եայ կերպով խնդրած ըլլալուն , Ն . Ս . Օժուլիւ-
նը արտօններ է յիշեալ Միաբանութեան , որով
յուլիս 17ին փոստին յանձնուեր է Վենետիկ զըր-
կուելու համար :

Բեգրոպուրկ բնակող Ժամհարեան եղբարք ,
որոնց ծնողքը բնիկ Բաղէշցի են , Մարաշի որ-
բանոցի տարեկան թոշակը և Արհեստարանի հա-
մար սահմանուած ծախուց գումարը այս տարի
ու զրկեր են Պատրիարքարան :

— Հանգուցեալ Գէորգ Թումանեանի որդի-
քը 4000 ռուբլի նուիրած են Էջմիածնայ Գէոր-
գեան Ճեմարանին՝ Հիւանդանոց կառուցանելու
համար :

— Արուստագէտ նկարիչ Տրապզոնցի Պ . Ար-
շակ Թէթվաճեան , որուն զեղանկարները գե-
ղարուեստական սալօններու մէջ գնահատուած են ,
նորին Ս . Օժուլիւն հրամանաւ , վայելուչ ճա-
շակով պիտի զարդարէ Էջմիածնայ Մայր-Տաճա-
րի զանազան կողմերը , և եկեղեցական մէկ քա-
նի պատկերներ պիտի դժէ Մայր-Աթոռին համար :



ԱԶԴ

Թաղական խորհուրդն իր փութայ ծանուցանել թէ Աղբ. վարժարանաց եւ մանկապարտեզի վերաբացու- մը տեղի պիտի ունենայ յառաջիկայ սեպտ. 3 երկու- չաքթի օրը.

Ուստի կը հրաւիրուին ծնողք եւ պաշտպանք ներ- կայանալ ամեն օր առաւօտները ժամը 8-12, իսկ կէս օրէն յետոյ ժամը 2-5 ի Թաղ. խորհրդարան, իրենց դաւակաց մտից արտօնագիրը ստանալու համար:


Ի դիմաց Թաղ. խորհրդոյ

Ատենադպ.

Ս. Գաբրիէլեան

Ատենադպ.

Յ. Թովմասեան



ԱՂԲԱՆՑ ԿՐԹԱՐԱՆ

Վարժարանիս Զոյ տարեշրջանը կը սկսի յառա- ջիկայ սեպտ 1/14ին:

Ս'աւանդուին Հայ ֆրանս. եւ Պոլկ. լեզուներէն զատ կրօնք. բարոյագիտութիւն. թուաբ. աշխարհագր. պատմութիւնք. բնագիտ. առ տնին տնտեսագիտ. եւայլն:

Այս տարի անցեալ տարիներէն աւելի մասնաւոր խնամք պիտի տարուի մանկապարտեզի մասին:

Ընդունելութիւնք եւ մասնաւոր տեսակցութիւնք կը կատարուին ամէն օր ժամը 9-12:

Վաւան

Տնօրէնութիւն

Սագալը չէշմէ թ. 1115

Պ. Ճիւրճեան

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՄ

Կը հարցնէք ինծի թէ ի՞նչեղաւ Վաւանայի մէջ ժո- ղովորդային միութիւն անունով կազմակերպուած մարմինը որուն մէկ քանի նիստերուն ներկայ գտնուեցայ մասնա-ւոր հրաւերով:

Տեղւոյս նազարէէկի մասնաճիւղը մայիս 5ին գու- մարուեցաւ որուն ներկայ եղան մասնաճիւղի ատենա- պետը Պ. Ճանկիւլեան, վարչութեան անգամները, ես և երկու ունկնդիրներ: Հոն փափաք յայտնուեցաւ գրամ չի յանձնել ու եւ կուսակցութեան, մինչեւ օրի- նաւոր կազմակերպութեան մը երևան գալը: Պ. Ճա- կիւլեան կարգացիր պատրաստած կանոնագիրը, որուն նպատակն էր աշխատիլ կուսակցութեանց միացմանը, ի հարկին մինչեւ իսկ ճնշում բանեցնելով անոնց վրայ, իսկ եթէ միացումը անհնարին ըլլայ, հայաստանի մէջ երևան եկած խումբերուն օգնել, խօսք անելով հար- ցուցի Պ. Ճանկիւլեանի թէ կուսակցութիւնները միա- ցընելու համար ժամանակաւ իր ըրած ճիգերը նըպաս- տաւոր ելքի մը հանգեցան. «Երբէք» պատասխանեց. ուրեմն ինչու նորէն այդ նպատակին հետամտիլ և ժո-

ղովորդը յուսախաբել: Դիտել տուի նաև թէ այն խում- բերը որոնց պիտի օգնուի, ժողովուրդային միութեան ձե- ումը պիտի պատրաստուին թէ ոչ կուսակցութիւններուն ձեռքով. «Անշուշտ կուսակցութիւններուն» պատասխա- նեց: «Քանի որ անոնք պիտի պատրաստեն, ի՞նչ հարկ կայ որ դուք անոնցմէ դատուիք, գրաւները զրկեցէք ա- նոնց», աւելցուցի թէ ընդհանուրին փափագին համե- մատ ընդհանուր կանոնագիր մը պատրաստուի բովանդակ Պուլկարիոյ հայութեան համար, ամեն քաղաք ունենայ իր վարչութիւնը, միաձայն հաւանութեամբ նախագահ մը եւ ընդհ. գանձապահ մը ընտրուի, եւ ասանկով գոյնայ դրամական ուժ մը: Ներկայք համաձայնեցան առաջարկիս եւ ըստ այնմ կանոնագիր մը պատրաստելու համար 5 անձերէ բաղկացեալ առժամեայ մարմին մը ընտրուեցաւ: Այս մարմինը ժողով մը գումարեց որուն մէջ միեւնոյն կարծիքը յայտնեցի եւ որուն համամիտ գտնուեցան ներկայք: Պ. Ճանկիւլեան երկու ժողովներուն մէջ ալ ինծի համակարծիք էր: Գրե ժողովին յան- կարծ խօսքը ինձ ուղղելով ըսաւ թէ դու առաջարկու- թիւնդ գժուար է եւ գայն գործադրելը մեր կարողու- թիւնէն վեր, մինք մեր շինած կանոնագրին համեմատ պիտի գործենք եւ այնպիսի ուժ մը գոյացնենք որ կա- ռող ըլլանք կուսակցական յարձակումներու դիմադրել, ուրիշ քաղաքներ եթէ ուզեն կարող են մեզի միանալ: Ասոր վրայ իր համախոհներուն հետ Պ. Ճանկիւլ- եան ի դիրեւ հանելով կանոնագրին պատրաստութիւնը, իր պատրաստած կանոնագիրը ընդունել տալով, ինքնա- ղլուխ կերպով պատրաստել տուաւ կնիք, ընկալագիր եւայլն, այնպէս որ այդ ժողովուրդային միութիւն ըսուա- ծը ուրիշ բան չէ եթէ ոչ Պ. Ճանկիւլեանի ետասիրա- կան ծաղրելի ձգտումներուն մէկ գործիքը, զոր անկա- ուղածին պէս պիտի խաղցնէ:

Ասոր վրայ իր համախոհներուն հետ Պ. Ճանկիւլ- եան ի դիրեւ հանելով կանոնագրին պատրաստութիւնը, իր պատրաստած կանոնագիրը ընդունել տալով, ինքնա- ղլուխ կերպով պատրաստել տուաւ կնիք, ընկալագիր եւայլն, այնպէս որ այդ ժողովուրդային միութիւն ըսուա- ծը ուրիշ բան չէ եթէ ոչ Պ. Ճանկիւլեանի ետասիրա- կան ծաղրելի ձգտումներուն մէկ գործիքը, զոր անկա- ուղածին պէս պիտի խաղցնէ:

Չմոռնանք բնելու որ, բոլոր անոնք որ դուրսէն ինծի պէս ներկայ էին առաջին երկու ժողովներուն, Պ. Ճանկիւլեանի այս նպատակաւոր փոփոխամտութեանը վրայ զարմացած այլեւս հեռացան:

ՊԱՂՏԱՍԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Յ. Գ. Մէյմէկ օրինակ ալ տեղական թերթերու զրկուած է:

ՆՈՅՆ

“ԱԶԱՏ ԽՕՍԷ”

Փոքր դիրքով և 16 երեսներէ բաղկացեալ այս անունով հոնդէս մը սկսած է հրատարակ- տիլ Բախիզի մէջ, խմբագրութեամբ Ժանօթ գը- րագէտ Տ. Ե. Օտեանի: Ոոյն հանդէսը տարեկան առնուազն 12 թիւերէ պիտի բաղկանայ, որուն բաժնեգրինն է 5 ֆրանք, կանխիկ:

Հասցէ

M. Perrier Pour Azad Khosk
Rue des Guillemites Paris (IVme)

ՍԵՐԸ

Արեւը ծաղիկին առաջին սիրահարն է: Մանկամարդ աղջիկներուն համար անիկա կէս-մարած կանդեղ մըն է, ուրեմն ինչպէ՞ս կ'ուզէք որ անոնք փթթին:

Դժբաղդ սէրը, այր մարդուն համար, անանց սիրոյ հաճոյքի պատրուակ մըն է:

Սերը սկիւռի մը պէս խիզախ և երկչոտ է միանգամայն:

Սիրահարը ջալամի մը կը նմանի ու կը կարծէ թէ չեն տեսնար զինքը, մինչդեռ ինք ուրիշները չի տեսնար:

Մայրական սէրը բնազդ մըն է, բայց կան նաև բնազդներ որք աստուածային շունչ մը ունին:

Սիրածնուս նախանձը յաբգանք մըն է մեզ:

Սոխակին երգն ու կատուին մլաւիւնը, հաւասար զգացումներ յայտնող երկու տարբեր արտայայտութիւններ են թէ և զիրար երբէք չեն հասկնար:

Անտարբերութիւնը ճահիճներու վրայ թուսնող մենտկեաց ծաղիկ մըն է:

ՔԱՐՄԷՆ ՍԻԼՎԱ

ԵՐԿՈՒ ԹԻԹԵՌՆԻԿՆԵՐ

(ՐԻԴԱ ԵՒ ՖԻՄԻ)

Երկու քիթեռնիկ,
Հեւ ի հեւ արքշիռ,
Սիրուն խաւսոսիկ
Թըռ չին սիրալիր:

Հագիւ մէկ զարմն
Զուարթածաղիկ,
Հաւքոյր ճակասուն
Տուեր է հեզիկ:

Մեկը ճըլճըլայ,
Միւսը արագիւն
Իւր սրտին կըրայ
Սեղմէ գանձն անգիւն:

Ծաղկալիր պարտէզ,
Երփներանգ հաճոյք,
Սիրաւորիւն անկեղծ
Եւ քեւ անկրտսանգ:

Երկուսն ալ զոհար,
Վարդի կոկոններ,
Երկնից աստղալստ
Իջած անմահներ:

ԱՍՈՒՊ

ՔԻՉ ՄԸ ԱՌՈՂՋԱԿԱՆ



ՈՐՈՆՔ ԾՈՎ ՄՏՆԵԼՈՒ ԵՆ

ԵՒ ՈՐՈՆՔ ԾՈՎ ՄՏՆԵԼՈՒ ԶԵՆ

Ծով մտնելու են անոնք որ՝ աւշային խառնուածք մը ունին, խոյլ (սըրաճա) և անարիւնութեան ենթակայ են, անարիւնութեան հետեւանօք ջրացաւեր ու սրտի բաբախումներ ունին, նշիկներնին (պատէմճիք) ունեցած են, ընականնին չեն տեսնար, գծուարագաշտանութեան ենթակայ են, փքային գծուարամարտութիւն ունին, ուղեղին շատ յոգնեցուցած են, քննութիւններ անցնելով տկարացած են, նստուկ կեանք կանցանն, յամառ պնդութեան մը ենթակայ եղած են, ողնաթեքութիւն (ռաշիքիզլ) ունին, քթի գարշահոտութեամբ վարակուած են, վիժումներու պատճառաւ արգանդի տեղափոխութիւններ ունեցած են, ամիութեան զատապալտուած են, կանանչախտի, չլախտի և սերմնահոսութեան ենթակայ եղած են:

Ծով մտնելու չեն անոնք որ՝ սրտի հիւանդութիւն ունին, խիստ ծեր են, խիստ փոքրիկ են, յոգացաւ ունին, սպիտակազմութեան (սպիտակիւնի), վերնոտութեան (սառա), արգանդային արեւնախտութեան ենթակայ են, գաշտանի վրայ են, յղութեան առջի ամիսներուն մէջ են, գլխի պտոյտներ ունին, արիւն կը թքնեն, արիւն կը փսխեն, կուրծքի հիւանդութիւն ունին, 50-55 տարիքը անցուցած են, երկու տարեկանէն վար են, թոքախտաւոր են, աչքի, ականջի և մորթի հիւանդութիւններ ունին:

Տօքթ Բ. Թ. Ն.


Հետեւեալ գրքերը կը ծախուին Ա. Զարգ-հանէլեան գրատունը Վառնա.

Քերական ընթերցարան Պանտացի 1 ֆր. 20 ս.
Նոր ընթերց. Պոնճուգեան Ա. տարի 60 ս.

" " " " Բ. " 1 ֆր.

" " " " Գ. " 1 "

Քերական Թէյեանի 50 ս.



ՊՕԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

—

ՃԱՄԱՐՆԵՐԻ ՏԻՊԱՐՆԵՐԸ

Հիշալարթի առտուան մը ժամը երկու քն է (ը.թ.).
Ղալաթիոյ եկեղեցիէն Ներս տկին մը կը յառա-
ջանայ, կապոյտ շրջագոյստին փէշերը հովին տը-
ւած, ետեւէն «ւնենալով իր ճերմակ գոգնոցաւոր
Մարիամը, որ գրկած է հաղիւ հալ միամնայ մա-
նուկ մը:

Տիկինը նախ և առաջ աագին անդին նայե-
լով քթին տակէն արձակած պղտիկ ուրախ ժը-
պիտներովը քանի մը «Ներմեռանդուհիններ» բա-
րեւելէ յետոյ, նստարաններէ միայն վրայ կը նըս-
տի, միանգամայն Մարիամին ալ հրամայելով որ
ետին կայնի:

Քիչ յետոյ՝ չեմ գիտեր ինչ ինչ պատճառնե-
րով տիկինը հանգիստ չի կրնալ ընելով նստած
տեղը— թերևս եկեղեցին իր աւրօնը կարծելով,
եթէ ունի— կ'սկսի վեր վար ճեմել միշտ ետեւէն
ունենալով Մարիամը:

Չարածճի մանկիկն ալ չուշանար ճշալով իր
փոքրիկ դերը կատարելու և կամ աւելին կար-
ծես ներկայ գտնուողներուն ուշագրութիւնը գը-
րաւել տալու համար ջերմեռանդ մօրկան վրայ:

Ներկայ ուհիններէն մին համեստաբար մօ-
տենալով «ազնիւ» տիկնոջ, կը խնդրէ որ Մարիա-
մին հրաման տայ քեչ մը դուրս հանել մանկիկը
մինչև որ ճշալը դադարեցնէ:

Տիկինը. — Բա վայ մեղքիս... զէյէր չօճուխ
ունիմ տէյի ժամ չպիտի երթամ:

— Հա ամա քուրուկ, քահանային կարգա-
ցածը չի հասկցուիր կոր:

— Մօտը գնա քի հասկնաս (ու Մարիամին
դառնալով) հոս կեցի նայիմ քա՛, սըկէ ստնկ եր-
թաս նէ... աշկերդ կը փորեմ հա՛... Այս
ինչ ֆեյիսգետրիսն է, հարը չիմանայ. սէն նէ-
ճի... վայ հալիդ... էյէր իրիկունը հօրը զուր-
ցեմ նէ...:

— Մեղայ քուրուկ, մեղայ... փիւշման եղ-
այ պերանս պանալու:

Նոյն պահուն ուրիշ մը մօտենալով

— Բարե տիկին, ինչպէ՞ս էք աղէկ էք:

— Փառք Աստուծոյ, դուք ինչպէ՞ս էք:

— Էհ իշտէ... ասօր սանկ կտոր մը ժամ եր-
թամ ըսի Մարիամն առջիս ձգելով, պարէմ հիչ
չէ նէ քիչ մը հալա առած կ'ըլլամ:

— Օխ, Օխ... շատ աղէկ ըրիր. եավրում...
մաշալլահ մըսթիսի պէս ալ զատակ է. քանի՞ հատ
ունիս:

— Առջինէկս է տահա:

— Վույ ամա՛ա՛ա՛... Աստուած խոյէք
տայ...

— Էյ... Ան յարէ:

— Հայտէ՛ քա քուրուկ սանկ Խաչանկիստին
տակը երթանք տէ կայինք. պաշայեցին:

— Մարիամ դուն առջիս անցի նայինք:

— Այսօրուան տառն ալ սանքիմ քաշուելիք
պան չէ, առտուն փուտրալանմիշ եղայ ամա...
քրտինքէն աւրըեցաւ, պրոզաս կը փակի կոր
մարմինիս:

— Շապիսադ ալ կիտես քի, մէկ քով կա-
ցեր է:

— Սուս էյի քուրուկ ըսի եա... սա կար-
սօններն ալ անանկ էն (ու գլխարկը հանելով նո-
րէն կը տեղաւորեցնէ գլխուն վրայ): Թուշթով
փուտրո ունիմ, աճապա... քիչ մը քոեմ նէ կ'ըլ-
լայ:

— Եկեղեցիին մէջ անանկ պան կ'ըլլայ՝ քու-
րուկ, պարէմ պահարանը երթայիր նէ... ինչ է
նէ:

— Հոնհիչ չըլլար: Լաքին աշկ օլտուն սա կըն-
կանը մօր ժիլէին աղուսրութեան, ըսի եա... ան
բարային...:

— Ժամէն ետքը ո՛ւր պիտի երթաս:

— Խարագեղի ժուրուը անկէց ալ Լեոնին
պաղճան (ըսելիք պարապ բան, գիտենք որ այդ-
բարի սովորութիւնը ունիք):

— Խաչանկիստն ալ լմնցե՛ր է ի՞նչ է եղեր.
չօգ չէյ... Ժամը քաւ—քախըք է եղեր. ե՛րբ ալ
լմնցաւ:

— Քա հա... տեսա՛ր հիմա... պարեմ չի-
չէ ալ չառի իրիկունը աղային Խաչանկիստի ջուր
տանիմ տէյի:

— Էկող հինգ շաբթի թո՛ղ ըլլայ քուրուկ:

— Հիչ անանկ պան կ'ըլլայ: Քէֆօ աւրեցի
տէ չկրցի կացեր՝ ըսելու է իրիկունը մարդուս,
իմացա՛ր Մարիամ... իրիկունը պէրնէդ պան մը
չփախցնես... սօնրա չիյտեմ հա...:

— Հայտէ երթանք:

(Ահա թէ ինչո՛ւ եկեղեցի կերթան մեր օ-
րիորդներն ու տիկինները):

ՊԷԳԻՄ

ՏԵՂԱԿԱՆ

—

ՕՐՈՒԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

— Մովկիմ աղա, սթանպօլէն տօտը հարուր
հաղար հոգի պտոր կան եղեր. դուն ալ իմա-
ցա՛ր:

— Աստուած շատ քաջի չտայ. խենդը ըսեր՝
խելօքն ալ հաւտացեր է:

—Յեղայ գուն ալ, հիմա աստեղ խենդի խե-
լօքի խօսք կա՞յ, շաղէթաները պիլէ կրեր են
ըսին:

—Անոնց ամեն գրածը իրա՞ն է քի կնիկ. ան-
ցած տարի ալ Սթանպօլ Պէյօղլուն մեծ կրակ մը
եղեր տուն մը չի մնալով թէքմիլ մօխիւր դարձեր
է գրեր էին: Ամեն լսածիդ մի՛ հաւտար:

—Աման Մովկիմ աղա, երեսիդ ըսել չըլլայ
ամա բէք ինքնահաւան մարդ ես, տանտէրնիս
պիլէ իմացեր է տէ քիթը տնկեր է:

—Ան չարուխ կիջեցնէ:

—Տունս սուղ քիրայի պիտի տամ ըսելով
մենք ուրախութեան մէջ է:

—Ադ ուրախութիւնովը թող կենայ:

—Էյ աս հալատիսը ի՞նչ է:

—Աս հալատիսը՝ տուներնին սուղ քիրայի
տալ ուզող թախըմ մը տանտէրներուն խռռռն-
քուն ըլլալու է:

Ուրիշ տան մը մէջ.

—Գուզում Արթաքի աղա, քեզի բան մը
պիտի հարցնեմ, ինծի բէք մէռաքեղաւ:

—Հարցուր նայինք:

—Թէվաթուռ մը կայ եղեր անցած երկու-
շաբթի օրուան համար քի, տէրէճէսիդ տաք պի-
տի ըլլայ եղեր տէ՛ ամեն մարդ սէրին մախէն-
ները, քաթօյները պիտի քաշուին եղեր, հրեայ
մը ըսեր է. պարէ մարդուն խօսքը էկաւ էլա՛ւ:

—Ելաւ ես:

—Էյ մենք տունին մէջը բան մը չիմացանք,
ադխտար տէրէճէսիդ տաքը ո՞ւր ըրաւ:

—Բաղնիքն լուսն ներսերը:

—Մայրիկ, չորեքշաբթի գիշեր խանի մը
մէջ թէաթրոն խաղցող Ապտի մը իլէն Ապտի-
ցու մը իրարու հետ կռիւ ըրին. Ապտիցուն՝ Ապ-
տիին գլխուն պստածն մը իջեցուց:

—Էյ Ապտին ի՞նչ ըրաւ, ժանտար, բոլիս
չի կանչե՞ց:

—Չէ:

—Անտնկ է նէ անոնք չախա են ըրեր:

—Նոսրըլ չախա, մարդուն գլխէն արունը
Փըշըր Փըշըր վաղեց:

—Էյ գործը ադ տեղուանքը էլլալէն ետքն
ալ Ապտին կէնէ ծան չի հանե՞ց:

—Չէ, անկէ ետքն ալ տղօր պէս նստեցան
քօքա ըրին խմեցին:

—Իմ ըսածս է ետվում, անոնք օյինճի են՝
բռովայի համար առաջուց իրարու գլխի կը պատ-
ռեն քի՛ ետքն ալ սուտանմէտէ քախիթը ը-
նեն տէյի:

ՍԷՄԵՆ

ՅԵՐԱՅԻԻ

Ս.Մանս Բոժոժիկ եւ Ընկ.



Քամչաթքա

Վարպետ տուտուին միւսիւն՝ Քաղաքական թեր-
թի մը փոխ-խմբագիր կարգեցաւ:

Բոժ. —Եւ ողորմա քո արարածոց և ինձ
բազմամեջիս:

Նոյն

Մէկ քանի պարոններ սոյն անակնկալ լուրը
իրարու աւետելով կըսէին.

«Նէ՛ կիւնչէրէ գալաք է՞յ հաճի Մխիթար,
էօրտէկ սիլահաւար օլմուշ, Գալ տա մէօհիւրտար»:

Կէս օր

Նոր խմբագիրը զինքը շնորհաւորողներուն
խոստոցաւ յաշորդ թերթով (եթէ սակայն մինչեւ
այն ատեն պաշտօնին վրայ մնայ) «Տէվէյէ գա-
ղաղըզ» առածին համեմատ իր փորձառական ի-
մասաասիրութիւնն ընել տրդի քաղաքական անց-
ուղարձիին վրայ, մասնաւոր յօդուածով մը:

Օ Քաթէ Բիկօլէթթօ

Միւսիւ կածկլտաք և միւսիւ Մեզիկ երեք ան-
գամ զիրար ողջագութեցին և խոստացան հիա-
նալի յօդուածներով մղում մը տալ թերթին ըն-
թերցողները քնացնելու համար:

Պօրսային մէջ Փաս Էլեաին գինը կէս բարա
վրայ դրաւ:

Գալէա Հոմիւշարի

Շնորհունակ տէրպապաի մը վերարկուն գըտ-
նուեցաւ Թաթովիչի գինետունէն:



ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (28)

ՌԸՆԷ ՏԸ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՊԱՐԾԱՐ-ՄԱՄՈՒՅԸ)



Հազիւ կրածէփուած ճակատը տեղ տեղ ճեղքաւորուած էր. բնաւ լուսամուտ չի կար դուրսէն, և երկար նրբանցք մը կերակէր արտաբուստ, երկու ծխարձակ լաւ պարներով լուսաւորուած:

—Այս կապէլան, ինչպէս անուանեցիր զայն սիրելի նախագահս, ձեր ամենէն թանկագին հայթայթիչներէն մէկն է:

—Եւ հո՞ն պիտի մտնենք:

—Եթէ չենթադրէք որ մարդասպանը քոնկ իշխանին բով գտնելն աւելի հաւանական է.

—Իրաւունք ունիք, ըսաւ մանտարէնը, զոր իշխանին միակ անունն իսկ կը բաջարտէր. Երթանք.

Եւ նախ ինք անցաւ տանը սեմէն, ֆո—Հորն Եւ տեղն ունենալով.

Նրբանցքին գրեթէ կէսը, աջ դին, կոնկի վրայ բացուած գուռ մը հասան.

Ընդարձակ սրահի մը դուռն էր ուր գրեթէ հարիւր յիսուն հոգի կը գտնուէին. բայց մթնոլորտն այնքան թանձր էր որ երկու բարեկապները նախ և առաջ իրենց շուրջը բան մը չտեսան.

Հստով ինքզինքնուն եկան սակայն:

Այն ատեն Մէնկ աչքերն ու ականջները բացաւ. Պատին կրթնած փայտէ լայն նստարաններուն վրայ՝ կծկուած մարդեր կը ծխէին և իրենց առջև եղածներուն անտարբեր կերեալին, բայց սրահին միւս մասերը շուտով հանդարտ էին.

Ներկաները որոշ խմբակներ կը ձեւացնէին, որոցմէ ուրախութեան ազդակներ ու անէծքներ ալ կը բարձրանային:

Այս խմբակներ կը խոնուէին սեղաններուն շուրջ ուր խաղացողներ նստած էին, որոնք իրենց հագուստներէն դատելով՝ բաղբենի էին.

Սակայն այս սեղաններէն մէկ քանին ամբողջովին ծածկուած էին ստակներով և ոսկիի ձողերով, ուսկից ֆո—Հորն հնթադրեց թէ մինակ Մէնկ և ինք ծպտեալ չէին հոն.

Գրաւ բռնողները կը մաքառէին իրարու հետ և այն դրամատերներուն դէմ որք ստահները կը դնէին և

Թուղթերը կը բաժնէին, խաղի ճշմարիտ թուղթեր, ինչպէս մենք կը գործածենք, սա տարբերութեամբ որ մարդու պատկերներուն տեղ կային մտացածին թուղթներ՝ կանանչ, կարմիր և կապոյտ, կամ վիշապներ որք կարծես ամենէն զարհուրելի ծամածուռները կընէին կորսնցունողներուն, և սրահին շուրջը գտնուող նրբանցքէն յաճախողներ իրենց դրած ստակը վար կիջեցնէին կողովներու մէջ որք շատ անգամ պարապ վեր կելլալին.

Մէկիկ մէկիկ աչքէ անցունելէ յետոյ այդ տարօրինակ խաղարանին զանազան խումբերը, առանց հանդիպելու մարդու մը որ նմանէր Չուի մասին տիկին Լիուի ըրած նկարագրութեանը, ֆո—Հորն և Մէնկ յաջողեցան հետաքրքիրներու մէջէ սպրդիլ խաղասեղանի մը մօտ:

Հոն երկու մաքառողներ կային դէմ դիմաց, բայց խաղն յայտնապէս լուրջ էր: Ամբոխն եռանդեամբ կը հետեւէր բոլոր դարձուածքներուն, ձայնով ու շարժումով գրգռելով հակառակորդները.

Այդ խաղացողներէն մէկը դեռ երիտասարդ մըն էր, սիրտը արդէն կարծրացած անշուշտ, վասն զի գէմը բնաւ յուզում չէր յայտնէր:

Իւրաքանչիւր նոր դարձուածքի՝ առջին գտնուող ոսկիի և արծաթի դէզը կը խոշորնար, և պաղ արեամբ իրեն կը բաշէր շահը, հազիւ ժպիտ մը ցուցնելով, տարօրինակ ժպիտ որ աւելի իր հակառակորդին դէմ ունեցած ասելութիւնը կաշտայայտէր բան բախտին յաջողութիւնը.

Միւսը յիսնամեայ փոքր մարդ մըն էր, որուն նիհարեցած դէմքը ամեն մոլութեանց հետքը կը կրէր. փորուած ու նուաղկոտ աչքերը, տեգոյն ու թուամած շուրթերը, սև ու ծուռուծուռ ակռանները, ձեռքերուն դողդողացումը, մարմինն բոլոր թրթռացող շարժումները կը յայտնէին իր էն սիրած մոլութիւնը, ափսոսի զեղծում:

Զլաձգութեն կը խաղար, բախտը կանիծէր և ինքզինքը կը կորսնցունէր.

Վերջապէս, ունեցած վերջին դրամն ալ տալով, ոտքի ելաւ հայհոյելով: Ամբոխը ծամբայ բացաւ կարծելով որ անիկա մոլեգին արարքի մը պիտի դիմէր կամ իր կամ ուրիշին վրայ:

Բան մը չըրաւ:

Գրեթէ յանկարծ հանդարտելով, յաղթուողը անձայն անշուշտ ուղղութեամբ դուռն այն սենեկին որ մասնաւորապէս ծխողներու յատկացուած էր: Թանկագին թմբադեղը մոռցնել պիտի տար իր կորուստը ու փայլուն փոխարինութեան մը յոյսը ներշնչէր:

—Մեկնի՞նք, ըսաւ Մէնկ ֆո—Հորին, կողոպտուած խաղամուկն աչքէն հեռանալէն յետոյ, մեր մարդն հոս չէ, ապահով ենք:

—Այո, հեռանանք: պատասխանեց վերատեսուչը, բայց չպտի մոռնամ այս խաղարանը: Հօնանի արուարձանին թիքաօսները կրնան ապահով ըլլալ թէ գործ պիտի ունենան հետո՝ ասիկա ինքի իմաց տուած չըլլալնուն:

Երկու ընկերները փոքրց կիւն ու այդ տեղ կը լուսաւորուէր փոխառութեան գրասենեակներուն լապտերներէն, որք միշտ մօտ կ'ըլլան խաղատուներուն:

—Սանկիին հիմակ, հրամայեց ֆո—Հօր իր առաջնորդներուն: Իր կալուածը որքան ալ վատահամբաւ ըլլալ, աստեղէն աւելի դէշ բան չպիտի տեսնաք հոս:

Փոքր խումբը նորէն ծածկայ ելաւ:

Գիշերը մթին ու մահասարսուռ էր մնացած: Մեր բարեկամները քանի արուարձանին մէջ մխրձէին, փողոցները կամ լաւ եւս գոիհները աւելի կը նեղնային, աւելի կ'օձապտուտէին, կը խառնշտկուէին:

Այս բան այնու մանաւանդ կը վախցունէր նախագահը, վասն զի թաղը բոլորովին աւայի էր:

Այնքան կատարեալ լուռութիւն կը տիրէր հօն որ կարծես անբնակ էր կամ մեռելներ կը պարունակէր:

Այսպէս հասան մինչեւ պուտտարի մահանը, որուն բարձր պատերը ծածկուն մէկ կողմը կեղերէին, մինչդեռ միւս կողմը ողորմելի հիւղակներ միայն կային: Մէնկ որուն պղտորած աչքերը անդադար խաւարը կը խորաչափէին, այն առանց կարծեց նշմարել թէ տեղ տեղ, դրան մը տակէն, տան մը անկիւնէն ստուերներ կը զատուէին որք անշուշտ խոյս կուտային, սողալով:

Անմիջապէս իմաց տուաւ վերատեսուչին, բայց սա, այնքան բաջ որքան իր ընկերը վատասիրտ էր, եւ միտքը դրած ըլլալով գործը առաջ տանիլ, հետաքրքրութեան համար եւ թէ իրր պարտականութիւն, շատացաւ ուսերը թոթուելով, եւ ընկերոջը բազուկներէն բռնելով, փոքրը մութ գոիհ մը տարաւ զայն ուր Սուն—Բօ եւ Ա—Մուսանհետ եղած էին:

Հարիւր բայլի չափ առաջացած էին խարխափելով եւ հեռուն տեսնուած լոյսերուն պիտի ուղղուէին, երբ վեց հոգիի չափ օտարականներ երեւցան յանկարծ, իբրեւ թէ գետնէն դուրս ելլային, եւ գոիհին մէջտեղը կեցան անցքն արգիլելու համար:

—Ո՞վ էք, ի՞նչ կ'ուզէք: հարցուց այդ մարդոց մէկը սպասնադին շեշտով:

Մէնկ ընկրկման շարժում մը ըրաւ: Սուն—Բօ աչ-

խուժիւ յառաջացաւ եւ քանի մը բառ փոխանակեց անծանօթին հետ, եւ սա անմիջապէս հեռացաւ, բայց ապաքիլէ յետոյ իր ընկերներուն որ թող շտան պտըտողներուն յառաջանալ:

—Կարծեմ, պուտտան վկայ, միմայց սնամիտ դատաւորը, որ մուրացկաններուն իշխանը նախասենեակն սպասցունել կուտայ մեզի:

—Է՛հ, ճշմարիտ իշխան մըն է պատասխանեց ֆո—Հօր: Վերջապէս մեզ նկատմամբ այնպէս կը վարուի ինչպէս մենք շատ անգամ կը վարուինք ուրիշներու հետ:

—Ինչպէ՞ս, զուր, քանզոյն ոստիկանութեան վերատեսուչը, այս սինիքորներուն վրայ վստահութիւն ունի:

—Սա՛նկ երբեմն շատ օգտակար կըլլայ ինձի: Մէկ քանի ապահարկներու փոխարէն զորս կը վայելէ իր ընկերակցութիւնը, ինձի տեղեկութիւն կուտայ անանկ բաներու վրայ զորս յոյժ հետաքրքիր եմ գիտնալ, եւ որովհետեւ երբ ոճիր մը գործուի որուն հեղինակները չկրնամ երեւան հանել, բիշ մը պատասխանատու կը բռնեմ զինքը շարագործութեան, անձնուէր է ինձի:

—Ուրեմն ինչո՞ւ իրեն չգիմեցիք Լէնկի սպաննիչը գտնելու համար:

(Շարունակելի)

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ կը ձախուին.

Լուսինեան իշխան — Ֆրանսահայ Բառարան, գին 25 ֆր. ոսկեգրամ. Պուլկարահայ վարժարանաց համար 20 ֆրանք,

Թ. Գ. Հինտլեան — Տեսական և գործնական Գերականութիւն Պուլկարերէն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն. 2 ոսկէս ֆր.

Թապլաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ. Բարեկենդանի անկուտիները, կատակախաղ 1 արար 50 սնդ.

Մահճուպիյէթին միւքեաֆաթը, գօմէտի պիր բէրտէ, 50 սնդ.

Գագանճ գօճա եախօտ Էնֆիլէճի, գօմէտի պիր բէրտէ, 50 սնդ.